«ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 4-5-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի նախագահությամբ տեղի ունեցավ միջազգային խորհրդաժողով՝ «Քրիստոնեություն և իրավունք» խորագրով:

Խորհրդաժողովի ավարտին մասնակիցներն ընդունեցին հետևյալ բանաձևը.

«ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԲԱՆԱՁԵՎԸ

«Քրիստոնեություն և իրավունք» խորագրով միջազգային խորհրդաժողովը՝

- գումարված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 2000 թ. հոկտեմբերի 4-5-ը,
- նվիրված Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանին,
- կազմակերպված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից,
- բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի և
- մասնակցությամբ Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ Նահանգների և Վատիկանի ներկայացուցիչների,

Քննարկելով

- անհատի իրավունքների ասպվածաշնչյան ակունքները մատնանշող,
- քրիստոնեական-բարոյական սկզբունքները արդի ժողովրդավարական պետության օրինադաշտի ստեղծման համար որպես աղբյուր կարևորող,
- ժամանակակից անհատի քրիստոնեական և իրավական աշխարհընկալումի ձևավորման և այլ հարցեր,

Ողջունելով այն ելակետը, որ ժամանակակից անհատի թե՛ քրիստոնեական, թե՛ իրավական աշխարհընկալումով է մեծապես պայմանավորված մեր երկրի առաջընթացի հաջողությունը, համազգային մեր կյանքի միասնությունը,

Առանձնահատուկ կարևորեց հետևյալ հիմնահարցերը.

ա) Հայ Եկեղեցական Իրավունքի աղբյուրների ծանոթության անհրաժեշտությունը ՀՀ օրենսդրության ձևավորման գործընթացում:

բ) Բարոյական օրենքի գործադրության կարևորությունը պետական և հասարակական կյանքում և անհատի հոգևոր ու քաղաքացիական կերտվածքի ձևավորման, կրթության ու դաստիարակության գործում:

գ) Պետության և Եկեղեցու ներդաշնակ համագործակցությունը առկա խնդիրներին համաքայլ դարձնելու անհրաժեշտությունը:

ԾԱՌԱՏՈՒՆԿ՝ Ի ՆՇԱՆԱՎՈՐՈՒՄՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ 1700-ԱՄՅԱԿԻ

Հոկտեմբերի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Խոր Վիրապ՝ մասնակցելու հինավուրց վանքի տարածքում կազմակերպված ծառատունկին՝ ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի:

Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Անդաստանի արարողություն. օրհնվեցին աշխարհի չորս ծագերը, դաշտերն ու շեները: Ապա Վեհափառ Հայրապետը, ուղեկից Սրբազան Հայրերը և արարողությանը ներկա բարձրաստիճան պաշտոնյաներն ու օտարերկրյա դիվանագետները տնկեցին ծառեր, որոնք կանաչ օղակով կշրջափակեն պատմական վանքի տարածքը:

1700-ամյակի առիթով Հայաստանում բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր են բարեկարգվում ու նորոգվում, որոնք մոռացության էին ենթարկված խորհրդային տարիներին: Դրանց տարածքների կանաչապատումը հանձն է առել Ամերիկայի Հայկական համագումարի ներքո գործող հայ-ամերիկյան հասարակական կազմակերպությունը, որը «Հայաստանի ծառ» ծրագրով ողջ հոբելյանական տարվա ընթացքում 17000 տնկիներով կգարդարի շուրջ 45 վանքեր ու եկեղեցիներ:

«Հատկապես թանկ ու նվիրական է ծառատունկի այս խորհուրդը, որովհետև այն իրականացվում է սփյուռքի հայորդյաց հետ»,- ասաց Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքում: Նորին Սրբությունը փառք և գոհություն առաքելով առ Աստված, 1700-ամյակի նախաշեմին եկեղեցիների բարեզարդման ու պայծառացման համար, իր գնահատանքը հայտնեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի եկեղեցական գրասենյակի տնօրեն Տ. Հովնան արքեպս. Տերտերյանին և ծառատունկին անմիջական աջակցությունը բերող սփյուռքահայ զավակներին: